# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 9

**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի**
**2017թ. հոկտեմբերի 30-ին կայացած նիստի**

| | |
|---|---|
| Նախագահությամբ՝ | ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի |
| Քարտուղարությամբ՝ | ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի |
| Մասնակցությամբ՝ | ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է) |

**Օրակարգ՝**

1. Ընթացիկ հարց: Գիտական խորհրդի կազմի հաստատում:
Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

2. Մագիստրատուրայի հեռակա և առկա ուսուցման ավարտական կուրսերի մագիստրոսական թեզերի թեմաների բաշխման և կատարման աշխատանքների քննարկում :
Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

3. Ուսանողական խորհրդի կողմից ներկայացված տարեկան և բյուջետային ծրագրերի քննարկում և հաստատում:
Զեկուցող՝ուսանողական խորհրդի նախագահ

4. Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի դոկտորանտ Գայանե Ռուբիկի Թովմասյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Գ.Գսպոյան

5. Ընթացիկ հարց: 15T-5A297 ծածկագրով «Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն» թեմայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ.Աղուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ա.Խաչատրյանի և Լ.Բդոյանի «Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն» կոլեկտիվ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

6. Ընթացիկ հարց: Կառավարչական գործունեության հոգեբանություն գ/հ լաբորատորիայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ.Աղուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ա.Խաչատրյանի և Ս.Պողոսյանի «Կառավարչական որակների զարգացման հոգեբանական օրինաչափությունները» կոլեկտիվ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

7. Ընթացիկ հարց: «Հումանիտար հետազոտությունների կենտրոն» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի հաշվետվություն:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

8. Ընթացիկ հարց: «Մանց» համալսարանի հայցորդ Երանուհի Ստեփանի Թումանյանցի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

9. Ընթացիկ հարց: Ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ Մանե Վովայի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

10. Ընթացիկ հարց: Հ.Ստեփանյանի, Հ.Նավասարդյանի «Իրավիճակային խնդիրների ուսուցման մեթոդաբանություն» մեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

1. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Գիտական խորհրդի կազմի հաստատում:
   Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Ա.Լոքյանը նշեց, որ պայմանավորված այն հանգամանքով, որ գիտական խորհրդի անդամներ Նորայր Նազարյանը, Արսեն Աղաջանյանը, Անի Սարգսյանը ավարտել են Ակադեմիան, ուստի անհրաժեշտ է փոխել գիտական խորհրդի կազմը և համալրել նոր ուսանողներով: Ուսանողական խորհուրդը ներկայացրել է համապատասխան անդամների ցանկը, ուստի առաջակում եմ հաստատել գիտական խորհրդի հետևյալ կազմը՝

1. **Արսեն Լոքյան**
   ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ, բժշկական գիտությունների թեկնածու
2. **Ամալյա Սարիբեկյան**
   ՀՀ Նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ,տնտեսագիտության թեկնածու պրոֆեսոր
3. **Հրանուշ Հակոբյան**
   ՀՀ սփյուռքի նախարար, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
4. **Գոռ Չատինյան**
   ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտաուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
5. **Խաչատուր Բեզիրջյան**
   ՀՀ պետական կառավարման ակադեմիայի լրացուցիչ և շարունակական կրթության գծով պրոռեկտոր, կենսաբանական գիտությունների թեկնածու
6. **Թերեզա Խեչոյան**
   ՀՀ պետական կառավարման ակադեմիայի արտաքին կապերի գծով պրոռեկտոր
7. **Գոհար Ադամյան**
   ՀՀ պետական կառավարման ակադեմիայի վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու
8. **Հայկ Սարգսյան**
   Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
9. **Աղասի Սարգսյան**
   Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
10. **Արտակ Բաղդասարյան**
    ՀՀ պետական կառավարման ակադեմիայի վերապատրաստման և որակավորման բարձրացման բաժնի պետ, քաղաքագիտության թեկնածու
11. **Արմենակ Այվազյան**
    ՀՀ պետական կառավարման ակադեմիայի լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու
12. **Մարիամ Մարգարյան**
    ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր
13. **Գրիշա Գասպոյան**
    ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հանրային կառավարման ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
14. **Ռուբեն Աղուզումցյան**
    ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
15. **Արմեն Եզեկյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ, իրավագիտության թեկնածու, դոցենտ

16. **Լուսինե Զիլֆուղարյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսումնամեթոդական վարչության պետ
17. **Նաիրա Ղազարյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի բաժնի պետ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու
18. **Ավետիս Գևորգյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու
19. **Համլիկ Ստեփանյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար, գիտական խորհրդի նիստի քարտուղար, իրավագիտության ամբիոնի դոցենտ, իրավ.գիտ. թեկնածու, դոցենտ
20. **Լաուրա Պետրոսյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի արհեստակցական կազմակերպության նախագահ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
21. **Գայանե Հովհաննիսյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավախորհրդատու
22. **Արմեն Խաչատրյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսանողական խորհրդի նախագահ, Քաղաքագիտության ամբիոնի առկա ուսուցման 1622 թողարկման մագիստրանտ
23. **Նարեկ Խաչումյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման ամբիոնի առկա ուսուցման 1622 թողարկման մագիստրանտ
24. **Աիդա Մելքոնյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Իրավագիտության ամբիոնի առկա ուսուցման 1723 թողարկման մագիստրանտ
25. **Թագուհի Ծատինյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման հոգեբանության ամբիոնի առկա ուսուցման 1723 թողարկման մագիստրանտ
26. **Արամ Կոստանյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Քաղաքագիտության ամբիոնի առկա ուսուցման 1622 թողարկման մագիստրանտ

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Խ.Բեզիրջյանը, Անի Սարգսյանը:

**Որոշեցին՝** Հաստատել գիտական խորհրդի ներկայացված կազմը:

2. **Լսեցին՝** Մագիստրատուրայի հեռակա և առկա ուսուցման ավարտական կուրսերի մագիստրոսական թեզերի թեմաների բաշխման և կատարման աշխատանքների քննարկում:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ. Աղուզումցյանը, Իրավագիտության ամբիոնի վարիչ Ա.Եգեկյանը, Քաղաքագիտության ամբիոնի վարիչ Մ.Մարգարյանը և Կառավարման ամբիոնի վարիչ Գ.Գասպարյանը ներկայացրեցին մագիստրա-տուրայի հեռակա և առկա ուսուցման ավարտական կուրսերի մագիստրոսական թեզերի

թեմաների բաշխման և կատարման աշխատանքների վերաբերյալ իրականացրած աշխատանքները:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Մ.Մարգարյանը, Գ.Չատինյանը:

**Որոշեցին՝** Մագիստրատուրայի հեռակա և առկա ուսուցման ավարտական կուրսերի մագիստրոսական ատենախոսությունների թեմաների բաշխման և կատարման աշխատանքները գնահատել բավարար:

3. **Լսեցին՝** Ուսանողական խորհրդի կողմից ներկայացված տարեկան և բյուջետային ծրագրերի քննարկում և հաստատում:
Զեկուցող՝ ուսանողական խորհրդի նախագահ

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Ա.Խաչատրյանը, Ս.Սարիբեկյանը:

**Որոշեցին՝** Հաստատել ուսանողական խորհրդի կողմից ներկայացված տարեկան և բյուջետային ծրագրերը (կից ներկայացվում են)

4. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի դոկտորանտ Գայանե Ռուբիկի Թովմասյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Գ.Գասպոյան
Զեկուցողը ներկայացրեց, որ Կառավարման ամբիոնում 27.10.2017թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ամբիոնի դոկտորանտ Գայանե Ռուբիկի Թովմասյանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին Գայանե Ռուբիկի Թովմասյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել «Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Գ.Գասպոյանը, Ա.Սարիբեկյանը:

**Որոշեցին՝** Գայանե Ռուբիկի Թովմասյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել «Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

5. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: 15T-5A297 ծածկագրով «Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն» թեմայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ.Աղուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ա.Խաչատրյանի և Լ.Բդոյանի «Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն» կոլեկտիվ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան
Զեկուցողը նշեց, որ Կառավարման հոգեբանության ամբիոնում 23.10.2017թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և միջնորդում են գիտական խորհրդին տպագրության երաշխավորել 15T-5A297 ծածկագրով «Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն» թեմայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ.Աղուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ա.Խաչատրյանի և Լ.Բդոյանի «Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն» կոլեկտիվ մենագրությունը:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Ռ.Աղուզումցյանը, Լ.Պետրոսյանը:

**Որոշեցին՝** 15T-5A297 ծածկագրով «Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն» թեմայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ.Աղուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ա.Խաչատրյանի և Լ.Բդոյանի «Կառավարչական գործունեության հոգեբանական անվտանգություն» կոլեկտիվ մենագրությունը երաշխավորել տպագրության:

6. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Կառավարչական գործունեության հոգեբանություն գ/հ լաբորատորիայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ.Աղուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ա.Խաչատրյանի և Ս.Պողոսյանի «Կառավարչական որակների զարգացման հոգեբանական օրինաչափությունները» կոլեկտիվ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

Զեկուցողը նշեց, որ Կառավարման հոգեբանության ամբիոնում 23.10.2017թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և միջնորդում են գիտական խորհրդին տպագրության երաշխավորել Կառավարչական գործունեության հոգեբանություն գ/հ լաբորատորիայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ.Աղուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ա.Խաչատրյանի և Ս.Պողոսյանի «Կառավարչական որակների զարգացման հոգեբանական օրինաչափությունները» կոլեկտիվ մենագրությունը:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Ռ.Աղուզումցյանը, Լ.Պետրոսյանը, Խ.Բեզիրջյանը:

**Որոշեցին՝** Կառավարչական գործունեության հոգեբանություն գ/հ լաբորատորիայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ.Աղուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ա.Խաչատրյանի և Ս.Պողոսյանի «Կառավարչական որակների զարգացման հոգեբանական օրինաչափությունները» կոլեկտիվ մենագրությունը երաշխավորել տպագրության:

7. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: «Հումանիտար հետազոտությունների կենտրոն» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի հաշվետվությունը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Գ.Չատինյանը:

**Որոշեցին՝** «Հումանիտար հետազոտությունների կենտրոն» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի արդյունքները գնահատել բավարար (հաշվետվությունը կից ներկայացվում է):

8. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: «Մանց» համալսարանի հայցորդ Երանուհի Ստեփանի Թումանյանցի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

Զեկուցողը նշեց, որ Իրավագիտության ամբիոնում 27.10.2017թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և միջնորդում են գիտական խորհրդին՝ հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը, Երևանի «Մանց» համալսարանի հայցորդ Երանուհի Ստեփանի Թումանյանցի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Սահմանադրական սկզբունքները որպես դատական իշխանության ինքնուրույնության հիմք» վերահաստատել «Դատական իշխանության ինքնուրույնությունը որպես սահմանադրական սկզբունք» վերտառությամբ:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Խ.Բեզիրջյանը, Ա.Եզեկյանը:

**Որոշեցին՝** Երևանի «Մանց» համալսարանի հայցորդ Երանուհի Ստեփանի Թումանյանցի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել «Դատական իշխանության ինքնուրույնությունը որպես սահմանադրական սկզբունք» վերտառությամբ:

9. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ Մանե Վովայի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
Զեկուցողը նշեց, որ Իրավագիտության ամբիոնում 27.10.2017թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և միջնորդում են գիտական խորհրդին՝ հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը, Ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ Մանե Վովայի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Մարդու իրավունքների վարչաիրավական և վարչադատավարական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» վերահաստատել «Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Ա.Սարիբեկյանը, Ա.Եզեկյանը Ա.Գևորգյանը:

**Որոշեցին՝** Ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ Մանե Վովայի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել «Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանությունը ՀՀ-ում» վերտառությամբ:

10.**Լսեցին՝** Ընթացիկ հարց: Հ.Ստեփանյանի, Հ.Նավասարդյանի «Իրավիճակային խնդիրների ուսուցման մեթոդաբանություն» մեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
Զեկուցողը նշեց, որ Իրավագիտության ամբիոնում 27.10.2017թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և միջնորդում են գիտական խորհրդին տպագրության երաշխավորել Հ.Ստեփանյանի, Հ.Նավասարդյանի «Իրավիճակային խնդիրների ուսուցման մեթոդաբանություն» մեթոդական ուղեցույցը:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Գ.Գսպոյանը, Ա.Եզեկյանը Ա.Գևորգյանը:

**Որոշեցին՝** Հ.Ստեփանյանի, Հ.Նավասարդյանի «Իրավիճակային խնդիրների մեթոդաբանություն» մեթոդական ուղեցույցը երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝ Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝ Հ.Ստեփանյան

30 հոկտեմբերի 2017թ.

Կ.Տ.